ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԻՆՉՊԵՍ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԸ

ՁԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2018

ԻՆՉՊԵՍ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԸ

ԶԵՌՆԱՐԿ

ԵՐԵՎԱՆ 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ 4

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 4

ԻՆՉՈՒ՞ Է ԿԱՐԵՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ ԼՈՒՍԱԲԱՆԵԼԻՍ 5

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԿՋԲՈՒՆՔՆԵՐ 6

ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԵՎ ՆՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ 6

ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ 9

ԻՆՉՊԵՍ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ 11

ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ 14

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ 17

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ 18

ԵՐԵԽԱՅԻ ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ 20

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 22

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ 23

ԵՐԵԽԱՅԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ 25

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 25

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԱՄՔԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ 26

ԵՐԵԽԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ 26

ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ 28

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 29

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 31

Հավելված 1. 31

Երեխայի իրավունքների կոնվենցիան 31

Երեխայի իրավունքների կոնվենցիայի ամփոփ շարադրանքը լրագրողների համար 32

Հավելված 2. 41
Կայուն զարգացման նպատակները 41
Հավելված 3. 43
Լրագրողների միջազգային ֆեդերացիա 43
Երեխաներին առնչվող հարցերի վերաբերյալ հաղորդումների ուղենիշներ և սկզբունքներ 43
Հավելված 4. 46
Եվրոպայի առողջապահական հաղորդակցության ցանց 46
Ուղենիշներ առողջապահության ոլորտը լուսաբանող թղթակիցների համար 46
Հավելված 5. 47
Թեմատիկ օրացույց 47

ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿԸ

Լրագրողների ու մամուլի ներկայացուցիչների գործունեությունն այնպիսին է, որ վերջիններս լավագույնս կարող են երեխայի իրավունքների պաշտպանության հարցը պահել լրատվական օրակարգում՝ ներկայացնելով ինչպես երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ձեռնարկված քայլերը, այնպես էլ առկա մարտահրավերներն ու խնդիրները:

Սույն ձեռնարկը պատրաստված է աջակցելու լրատվական գործունեություն իրականացնողներին, որպեսզի երեխաների մասին պատմություններ ստեղծելիս նրանք առավելագույնս արժևորեն երեխայի իրավունքները: Այն պարունակում է գաղափարներ ու մարտահրավերներ լրագրողների և բոլոր նրանց համար, ովքեր ցանկանում են լուսաբանել երեխաների կարիքներն ու խնդիրները, նրանց ձեռքբերումներն ու ձգտումները:

Ձեռնարկի նպատակն է ամրապնդել լրատվական գործունեություն իրականացնողների պատկերացումները երեխայի իրավունքների մասին, ներկայացնել, թե որոնք են երեխայի հետ աշխատանքի և հրապարակման հիմնական կանոններն ու սկզբունքները, և թե ինչպես կարելի է երեխային առնչվող խնդիրը դարձնել տպագիր նյութ կամ հեռուստահաղորդում:

Ձեռնարկը կարևոր ուղեցուցային նշանակություն ունի և դրա գործնական կիրառությունը կապահովի երեխաների մասին պատասխանատու լուսաբանման ընդհանուր մոտեցում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Սույն ձեռնարկը պատրաստվել է՝ հիմք ընդունելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) մշակած՝ երեխայի վերաբերյալ լուսաբանման սկզբունքներն ու ուղենիշները, ձեռնարկները, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանում լրատվական գործունեություն իրականացնողների պրակտիկ փորձը:

Ձեռնարկը նախ ներկայացնում է երեխայի հետ հարցազրույցի և նրա մասին հրապարակումներ պատրաստելու ընդհանուր սկզբունքներն ու ուղենիշները, որոնք լրագրողը պարտավոր է պահպանել՝ անկախ ներկայացվող թեմայի բնույթից, հանրային հետաքրքրությունից, ներկայացվող պատմության դերակատարներից և այլն: Այնուհետև,

ձեռնարկն անդրադարձ է կատարում երեխայի իրավունքների ապահովման առանձին բնագավառներին՝ լրագրողին ներկայացնելով քննարկման առարկա արդիական հարցեր (STORYLINES), ինչպես նաև ստուգողական հարցադրումներ (CHECKLISTS), որոնք հնարավորություն կտան պարզելու, արդյոք խնդրին անդրադարձը լիարժեք է և բխում է երեխայի շահերից:

Ձեռնարկը պարունակում է նաև հավելվածներ (Երեխայի իրավունքների կոնվենցիայի ամփոփ շարադրանքը, երեխայի իրավունքներին առնչվող ներպետական և միջազգային օրենսդրության ցանկը, միջազգային կազմակերպությունների ուղենիշները, անձի համաձայնությունը ստանալու փաստաթղթի օրինակելի ձևը, երեխայի իրավունքների ոլորտի կազմակերպությունների ցանկը և այլն), որոնք ամփոփ զետեղում են երեխայի իրավունքների մասին իրավական անհրաժեշտ բազան և որոշ պրակտիկ տեղեկություններ:

ԻՆՉՈՒ՞Ի ԿԱՐԵՎՈՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ ԼՈՒՍԱԲԱՆԵԼԻՍ

Լրատվական հրապարակումները երեխաների մասին պատկերացումներն ու հասկացողությունը բարելավելու արդյունավետ միջոց են: Հաճախ մեծահասակներն առավել ուշադրություն են դարձնում երեխայի այն խնդիրներին, որոնք հրապարակվում են, քան դրանց ականջալուր են լինում երեխայի հետ անմիջական շփման արդյունքում:

Թե՛ միջազգային, թե՛ հայաստանյան լրատվամիջոցների հրապարակումներում մամուլում զգալի են երեխայի խնդիրներին կամ իրավունքներին վերաբերող տպագիր նյութերն ու հաղորդումները: Դրանց գերակշիռ մասը պատրաստված է երեխաների մասին մեծահասակների խոսքերի հիման վրա: Քիչ չեն դեպքերը, երբ երեխայի խնդիրներին հասարակության և պետական մարմինների ուշադրությունը հրավիրելու նպատակով նրանք ներկայացվում են զոհի կարգավիճակում՝ որպես, ասենք, հանցավորությունից, աղքատությունից կամ շահագործումից տուժողներ:

Արդյունքում, մենք երեխաների խնդիրների մասին տեղեկանում ենք մեծահասակների խոսքերից, բայց ոչ անմիջականորեն երեխաներից:

Մինչդեռ, չպետք է մոռանալ նաև երեխային լսելու, նրա կարծիքն ու ցանկություններն անմիջականորեն լսելի դարձնելու կարևորության մասին:

Այս առումով առաջնային է երեխաներին առնչվող հարցերի ճիշտ և պատասխանատու լուսաբանումը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

1. Հարգեք երեխայի արժանապատվությունն ու իրավունքները ցանկացած իրավիճակում:
2. Երեխայի հետ հարցազրույց անցկացնելիս կամ նրա մասին լուսաբանելիս հատուկ ուշադրություն դարձրեք յուրաքանչյուր երեխայի անձնական կյանքի գաղտնիության, իր կարծիքն արտահայտելու, իր վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցության իրավունքներին, ինչպես նաև վնասից և վրեժխնդրությունից պաշտպանվածությանը:
3. Գերադասեք երեխայի լավագույն շահը ցանկացած այլ բանից, անգամ եթե դա ուղղված է երեխային առնչվող հարցերի լուծմանն ու երեխայի իրավունքների խթանմանը:
4. Երեխայի լավագույն շահը որոշելիս հաշվի առեք կարծիքն ազատ արտահայտելու երեխայի իրավունքը՝ նրա տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:
5. Խորհրդակցեք նրանց հետ, ովքեր լավագույնս ծանոթ են երեխայի վիճակին և կարող են գնահատել Ձեր հաղորդման կամ այլ նյութի քաղաքական, սոցիալական և մշակութային ազդեցությունը:
6. Մի հրապարակեք պատմություն կամ լուսանկար, որը կարող է երեխային, նրա քույրերին կամ եղբայրներին, հասակակիցներին վտանգի տակ դնել, եթե անգամ վերջիններիս անունները փոխված, թաքցված են կամ չեն գործածվում:

ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ԵՎ ՆՐԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

1. Մի՛ վնասեք երեխային. խուսափեք հարցադրումներից, դիրքորոշումներից կամ մեկնաբանություններից, որոնք գնահատողական են, հաշվի չեն առնում մշակութային արժեքները, վտանգում են երեխային, նվաստացուցիչ են կամ ստիպում են վերապրել հոգեցնցող իրադարձությունների ցավը:
2. Մի՛ ցուցաբերեք խտրական մոտեցում հարցազրույց անցկացնելու համար երեխային ընտրելիս՝ նրա սեռի, ռասայի, տարիքի, կրոնի, կարգավիճակի, կրթության կամ ֆիզիկական կարողությունների հիմքով:

3. Մի՛ բեմականացրեք ձեր հաղորդումը. մի՛ խնդրեք երեխային պատմել կամ մասնակից լինել մի բանի, ինչը նրանց սեփական պատմության մաս չէ:

4. Համոզվեք, որ երեխան կամ նրա օրինական ներկայացուցիչը գիտեն, որ զրուցում են լրագրողի հետ: Պարզաբանեք նրանց, թե հարցազրույցն ինչ նպատակ ունի և ինչպես է այն օգտագործվելու:

5. Ձեռք բերեք երեխայի և նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը բոլոր սպասվելիք հարցազրույցների, տեսանկարահանման և հնարավորության դեպքում փաստագրական բնույթի լուսանկարների հրապարակման համար: Հնարավորության դեպքում այդ համաձայնությունը պետք է լինի գրավոր: Համաձայնությունը պետք է ձեռք բերվի պայմանով, որ երեխան կամ նրա օրինական ներկայացուցիչը որևէ կերպ ճնշված չեն և գիտակցում են, որ իրենք մասնակից են մի պատմության, որը կարող է լուսաբանվել տեղական կամ միջազգային մակարդակներում: Սա, որպես կանոն, ապահովվում է, եթե երեխայի համաձայնությունը ձեռք է բերվում երեխային հասկանալի լեզվով, և որոշումը կայացվել է՝ երեխայի վստահությունը վայելող մեծահասակի հետ խորհրդակցելով:

6. Ուշադրություն դարձրեք՝ երբ և ինչ պայմաններում է երեխան հարցազրույց տալիս: Սահմանափակեք հարցազրույց վերցնողների և լուսանկարահանողների քանակը: Համոզվեք, որ երեխան իրեն հարմարավետ է զգում և կարող է ներկայացնել իր պատմությունն առանց կողմնակի, այդ թվում՝ հարցազրույց վերցնողի ազդեցության: Ֆիլմում, հարցազրույցների տեսագրման կամ ձայնագրման ժամանակ հաշվի առեք, թե տեսարանը կամ ձայնային ուղեկցումն ինչ տպավորություն կարող է ստեղծել երեխայի կամ նրա կյանքի և պատմության մասին: Համոզվեք, որ երեխան վտանգի կամ բացասական հակազդման չի ենթարկվի իր բնակարանը, համայնքը կամ գտնվելու վայրը ցուցադրելու արդյունքում:

7. Զերծ մնացեք որևէ երեխայի հետագա խարանումից, խուսափեք նրա վրա բացասաբար անդրադարձող դասակարգումներից կամ բնորոշումներից, որոնք լրացուցիչ ֆիզիկական կամ հոգեբանական ցավ կպատճառեն երեխային կամ կհանգեցնեն հետագա չարաշահման, խտրականության կամ համայնքի մերժողականությանը:

8. Միշտ ներկայացրեք երեխայի պատմության կամ պատկերի ճիշտ համատեքստը:

9. Միշտ փոխեք երեխայի անունն ու թաքցրեք նրա ինքնությունը բոլոր այն դեպքերում, երբ երեխան՝

- սեռական բռնության կամ շահագործման զոհ է դարձել.
- ֆիզիկական կամ սեռական բռնության է ենթարկվել.

- ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ վարակակիր է, քանի դեռ երեխան, ծնողը կամ օրինական ներկայացուցիչը չի տվել է իր իրազեկված համաձայնությունը.
- գտնվում է քրեական հետապնդման ներքո կամ դատապարտվել է հանցագործության համար:

10. Երեխային վնասելու կամ նրանից վրեժխնդիր լինելու ռիսկի կամ հնարավոր այլ ռիսկի դեպքում փոխեք երեխայի անունն ու թաքցրեք նրա ինքնությունը, եթե երեխան՝

- ռազմական գործողությունների անմիջական մասնակից է (կոմբատանտ) կամ եղել է այդպիսին.
- ապաստան հայցող է, փախստական կամ տեղահանված անձ է:

11 . Որոշ դեպքերում երեխայի ինքնության բացահայտումը (անունը կամ ճանաչելի պատկերը) բխում է երեխայի շահերից: Այդուհանդերձ, երեխայի ինքնությունը բացահայտելու դեպքում անգամ ինքը պետք է պաշտպանված լինի վնասից և ցանկացած խարանումից ու ճնշումից: Օրինակ՝ երեխայի ինքնությունը կարելի է բացահայտել, երբ երեխան՝

- նախաձեռնում է լրագրողի հետ շփումը՝ ցանկանալով իրացնել իր կարծիքն արտահայտելու ազատությունը և այն լսելի դարձնելու իրավունքը.
- ներգրավված է սոցիալական ակտիվության ծրագրում և ցանկանում է ներկայացվել որպես այդպիսին.
- ներգրավված է սոցիալ-հոգեբանական ծրագրում և պնդում է, որ իր անունն եւ ինքնությունն առողջ զարգացման նախադրյալ են:

12 Հավաստիացեք երեխայի ասածի ճշմարտացիության մեջ՝ զրուցելով այլ երեխաների կամ մեծահասակի (նախընտրելի է՝ երկուսի) հետ:

13 Եթե կասկածում եք՝ արդյոք երեխան վտանգված է, ներկայացրեք երեխաներին վերաբերող ընդհանուր վիճակը՝ առանց կոնկրետ երեխայի մատնանշելու, անգամ եթե դա լուսաբանման արժանի պատմություն է:

Երեխան ունի կյանքի իրավունք, ինչպես նաև իրավունք՝

- իրեն վերաբերող հարցերով որոշում կայացնելու.
- կարծիք արտահայտելու.
- խղճի ու դավանանքի ազատության.
- խաղալու և իր անձնական կյանքն ունենալու.
- տեղեկացված լինելու.
- տեղեկություն տարածելու.

- ընտանիքում ապրելու.
- առողջ ապրելու.
- կրթություն ստանալու և այլն:

Երեխայի մասնակցությամբ կամ նրան վերաբերող հարցերի՝ զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանման ընթացքում և երեխային վերաբերող խնդիրը հրապարակելու հնարավորություն ունեցող անձինք (լրագրող, օպերատոր, ռեժիսորը և այլն) պարտավոր են պահպանել երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող պահանջները:

Եթե անգամ կոնկրետ իրավիճակում երեխային տեսանկարահանելու արգելք չկա, տեսանյութի հրապարակման պատասխանատուները պետք է վեր դասեն երեխայի շահն անգամ այն դեպքում, երբ այդ հրապարակումը լրատվամիջոցին կբերի բարձր դիտողականություն, վարկանիշ, այցելություններ կամ հավանումներ:

ԵՐԵԽԱՅԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Եթե լուսաբանվող խնդրում երեխան տուժող է, նրան բաց դեմքով կադրում ցուցադրելը կամ լուսանկար հրապարակելը կարող է վնասել վերջինիս: Լավագույն տարբերակն այդ մտքից հրաժարվելն է:

Նախքան երեխայից հարցազրույց վերցնելը նախ անհրաժեշտ է ստանալ ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությունը, իմանալ մանկավարժի կարծիքը: Չի կարելի անտեսել կարծիքն ազատ արտահայտելու երեխայի իրավունքը:

Անհետաձգելի կամ ուղիղ եթերում նկարահանման պարագայում, երբ գործնականում հնարավոր չէ արագ ստանալ մեծահասակներից որևէ մեկի թույլտվությունը, անհրաժեշտ է ձայնագրող կամ տեսագրող սարքը միացրած վիճակում երեխային բացատրել հարցազրույցի նպատակը, նրա առջև դրված խնդիրը, սպասվելիք արձագանքը:

Երեխայի հետ խոսելիս պետք է պահպանել աչք աչքի հավասարությունը: Երեխային չպետք է ուղղել հարցեր, որոնց բովանդակությունը կարող է առաջացնել շփոթություն կամ տարընկալման տեղիք տալ: Հարցերը

պետք է ձևակերպել պարզ նախադասությունների միջոցով՝ երեխայի տարիքին համապատասխան, նրա համար լիարժեք ընկալելի խոսակցական բառապաշարով: Չի կարելի ձայնի, դեմքի արտահայտության կամ ժեստերի միջոցով ճնշում գործադրել երեխայի վրա:

Զրուցեք էթնիկ և սոցիալական տարբեր խմբերի երեխաների հետ: Նրանք կարող են թեմաների հիանալի աղբյուր լինել և օգնել իրենց առնչվող հարցերը նոր անկյուններից դիտարկել:

Երեխային վերաբերող խնդիրները լուսաբանելիս տեղեկատվության ամբողջականությունը, բազմակողմանիությունն ու օբյեկտիվությունն ապահովելու համար հետևեք երեխաների հարցերով զբաղվող մարմինների, այդ թվում՝ ոստիկանության, քաղաքապետարանի ու նախարարությունների համապատասխան ստորաբաժանումների, Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը և այլն:

Համագործակցեք երեխաների խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ, ուսումնասիրեք նրանց վեր հանած խնդիրները՝ հնարավորության դեպքում նաև անձամբ շփվելով խնդիր ունեցող երեխայի հետ:

Մի բացառեք նաև այն, որ կազմակերպությունը, որից տեղեկություն եք ակնկալում կամ ստանում, կարող է առաջնահերթ կարևորել սեփական շահը և տեղեկություն տրամադրել՝ դրանով առաջնորդվելով:

Երեխային հաղորդման կամ միջոցառման հրավիրելիս անհրաժեշտ է նրան նախապես ծանոթացնել նկարահանման տաղավարին: Ռադիոյի, էլեկտրոնային կամ տպագիր մամուլի դեպքում բացատրել՝ ինչպես է ընթանալու հարցազրույցը և ինչ տեսք է ունենալու այն հրապարակման պահին:

Անկախ հաղորդման ձևաչափից՝ երեխաների հնչեցրած պատասխանները հրապարակեք առանց սեփական (սուբյեկտիվ) մեկնաբանության:

Անհրաժեշտ է, որ հրապարակման մեջ երեխան ճանաչի իրեն, ոչ թե լսի կամ կարդա, թե ինչպես են իր մտքերը մեկնաբանություն ստանում մեծահասակների տեսանկյունից:

Երեխաների հետ հարցազրույց անցկացնելիս՝

- ապահովեք, որ նրանք իրենց զգան հարմար ու անկաշկանդ.
- հնարավորինս երկար ժամանակ տրամադրեք ձեր մտադրությունները նրանց հասկանալի դարձնելու համար.
- համաձայնություն ստացեք նրանց անունները հաղորդման մեջ օգտագործելու, նրանց լուսանկարելու, նկարահանելու և դրանք հրապարակելու համար.
- բացատրեք երեխային, թե անհրաժեշտության դեպքում ինչպես կապվել ձեզ հետ և ստանալ նյութի հրապարակման հղումը:

Նյութը հրապարակելիս գնահատեք երեխայի անձնական տվյալները, այդ թվում՝ նկարի տեսքով հրապարակելու ռիսկն ու քննարկեք այն երեխայի, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների և խմբագրության գործընկեր լրագրողների հետ:

Մինչև երեխայի մտահոգությունների ու պնդումների հրապարակումը ստուգեք դրանք այն ընթացակարգերով, որոնցով սովորաբար ստուգում եք մեծահասակից ստացած տեղեկությունները:

ԻՆՉՊԵՍ ԼՈՒՍԱԲԱՆԵԼ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հաշմանդամություն ունեցող երեխայի մասին գրելիս նախ պետք է հաշվի առնել նրա իրավական ու սոցիալական կարգավիճակը:

Պարզեք՝ որն է նրանց համար հավասար հնարավորությունների բացակայության պատճառը՝ հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների մասին օրենսդրության բացակայությունը, նախապաշարմունքը, հաշմանդամության տեսակը, երեխաների ու նրանց հնարավորությունների նկատմամբ հանրային վերաբերմունքը, հասարակությունում ձևավորված կարծրատիպերը և այլն:

Զրուցեք երեխաների հետ և պարզեք, թե որոնք են այդ նախապաշարմունքների պատճառները: Նկարագրելով իրենց սեփական փորձը՝ երեխաները կօգնեն ձեզ վերացնել հաշմանդամություն ունեցող մարդու մասին կարծրատիպերն ու սխալ պատկերացումները:

Եթե հոդվածը կամ ռեպորտաժը հաշմանդամություն ունեցող երեխայի սոցիալական խնդիրների մասին է, նախ պետք է պարզել, օրինակ, ծնողները ստանում են արդյոք անհրաժեշտ խորհրդատվություն, ֆինանսական և գործնական աջակցություն: Արդյոք այդ աջակցությունն անվճար ապահովվում է, թե տրամադրվում է միայն սոցիալական կարիքների գնահատման հիման վրա: Այսպիսի ընտանիքներին տեղեկացրեք հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների հետ աշխատող այլ կազմակերպությունների մասին:

Հաշմանդամություն ունեցող երեխաներից շատերը հաճախ իրենց ունակությունները լիարժեք իրացնելու հնարավորություն չունեն, որովհետև, մեծահասակների կարծիքով, նրանք կարողություններ չունեն: Հաշմանդամություն ունեցող երեխաներից հետաքրքրվեք՝ արդյոք նրանք ստանում են անհրաժեշտ աջակցություն իրենց կարողությունները լիարժեք զարգացնելու համար, և արդյոք խրախուսվում է նրանց մասնակցությունը քաղաքացիական հասարակության կյանքին: Արդյոք երեխաների հետ խորհրդակցում են՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները կրթության, տրանսպորտի, հանրային շենքեր ելումուտի հարմարությունների, ժամանցի պայմանների և այլ ոլորտներում: Ի՞նչ աջակցություն նրանք կարող են ստանալ:

Անդրադարձեք այն խնդրին, որ հաշմանդամություն ունեցող երեխաները գործնական դժվարությունների են հանդիպում, քանի որ նրանց հատուկ կարիքներն անտեսվում են ծառայություններ մատուցողների, շենքեր ու շինություններ նախագծողների, կառուցողների և արտադրողների կողմից:

Օգտվելով լրագրողի մասնագիտության ընձեռած լայն հնարավորություններից՝ բարձրաձայնեք հաշմանդամություն ունեցող անձանց համար շենք-շինությունների, հասարակական տրանսպորտի անհրաժեշտ տեխնիկական հնարավորությունների բացակայության մասին (վերելակներ, թեքահարթակներ, տրանսպորտի դեպքում՝ շարժական, վարդակներ, հարմարեցված զուգարաններ, լայն դռներ և այլն) բացակայության մասին:

Շենք-շինություններ կառուցողներին հիշեցրեք, որ անհրաժեշտ է ապահովել հաշմանդամություն ունեցող մարդկանց ու, մասնավորապես, երեխաների համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները:

Հաշմանդամություն ունեցող երեխայի մասին հոդված կամ նյութ գրելիս ընդգծեք՝ արդյոք նա ունի տանից դուրս գալու, զբոսնելու հնարավորություն:

Որքանո՞վ է պետությունը նպաստում հաշմանդամություն ունեցող երեխաների համար հարմարեցված տրանսպորտային միջոցների և տեղաշարժման այլ հնարավորությունների ավելացմանը:

Բարձրաձայնեք հատուկ հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի մասին, հատկապես երբ նրանց շահերը ներկայացնող չկա: Ուսումնասիրեք, թե ովքեր են ղեկավարում այդ հաստատություններն ու որտեղից են դրանք ֆինանսավորվում:
Տեղեկացրեք ձեր և այլ երկրներում երեխաների նկատմամբ դրական վերաբերմունքի ու խնամքի մեթոդների մասին: Ուսումնասիրեք երեխաների կարծիքը դրանց մասին:

Հաշմանդամություն ունեցող երեխայի հետ հարցազրույցից առաջ ինքներդ ձեզ համար հստակեցրեք՝

- ո՞րն է ձեր հաղորդման առանցքը՝ երեխան, թե՞ հաշմանդամությունը.
- արդյոք վերնագրել եք ձեր հրապարակումը, թե՞ ցանկացել եք, որ արծարծված թեման ինքը խոսի այդ մասին: Հարցրե՞լ եք երեխաներին՝ արդյոք նրանք ցանկանում են, որ իրենց հաշմանդամության մասին նշվի հրապարակման մեջ և ինչպե՞ս.
- եթե նշել եք երեխայի հաշմանդամության մասին, արդյոք այն ուղղակիորեն առնչվում է խնդրին կամ թեմային: Օրինակ՝ եթե հաշմանդամություն ունեցող երեխաներն արշավ են կազմակերպում, որպեսզի իրենց համար մուտք ապահովվի ինչ-որ շենք, ապա նրանց հաշմանդամությունը կարող է հարցին առնչվել: Հաշմանդամության փաստը, սակայն կարող է առհասարակ կարևոր չլինել, եթե երեխաներն արշավ են կազմակերպում վայրի բնության մի տեղամաս փրկելու համար, կամ եթե հանգանակություն են կազմակերպում մեկ այլ նպատակի համար:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց մասին խոսելիս մեր ընտրած բառերը կարող են նրանց նկատմամբ ձևավորված կարծրատիպային վերաբերմունքն ու ընկալումները փոխել կամ հակառակը՝ խորացնել խտրական մոտեցումները:

Պետք է խուսափել այնպիսի ձևակերպումներից, ինչպիսիք են՝ հոգեկան հիվանդ կամ խուլ ու համր և այլն: Փոխարենը կարելի է ասել, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կամ տեսողության, լսողության բացակայություն և այլն:

Չպետք է հիմնվել «ժողովրդական» բառերի կամ կարծրատիպերի վրա. դրանք կարող են վիրավորական լինել: Կասկածների դեպքում պետք է դիմել համապատասխան մասնագետի օգնությանը:

Սոցիալական խնդրի վրա ուշադրություն հրավիրելը չպետք է իրականացվի հաշմանդամություն ունեցող երեխաներին անարդար անհավասարության մեջ դնելով, զգացմունքային լեզվով այդ երեխաների նկատմամբ խղճահարություն առաջացնելու միջոցով: Դա անընդունելի է:

Հաշմանդամությունը կարող է հիվանդության հետևանք լինել, բայց հաշմանդամությունն ինքնին հիվանդություն չէ և վարակիչ չէ: Ոմանք համարում են, որ հաշմանդամությունը հասարակության կողմից ստեղծված արհեստական երևույթ է, որն արդյունք է հասարակության անդամների համար ոչ հավասար պայմանների ստեղծմանը:

ԵՐԵԽԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ

Հետևեք վիճակագրական տվյալներին: Օրինակ՝ ինչպիսի՞ն են ծննդատներում մանկական մահացության, մինչև 5 տարեկան երեխաների մահացության տվյալները և կանխարգելվող մանկական հիվանդություններով (օրինակ՝ տուբերկուլյոզով և դիֆթերիայով) հիվանդացության դեպքերի վիճակագրությունը:

Պարզաբանումներ ստացեք մասնագետներից: Փնտրեք խտրական մոտեցումների հիման վրա ձևավորված վիճակագրական տվյալներ:

Ուսումնասիրեք մանկական համաճարակների պատճառները, այդ թվում՝ բնապահպանական գործոնները և պետական առողջապահական ծառայությունների համապատասխանությունը սահմանված պահանջներին: Արդյոք կան զանգվածային իմունացման ծրագրեր: Ինչպե՞ս է պետությունը կառավարում մանկական առողջապահությունը: Համեմատեք առողջապահության և հանրային ծառայությունների ֆինանսավորման մակարդակը:

Մանկաբարձական և մանկաբուժական ծառայությունները հետազոտելու համար հաղորդեք ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող առանձին պատմություններ: Արդյոք շատ են ծննդաբերությանն առնչվող խնդիրները: Որքանո՞վ են արդյունավետ առողջության առաջնային պահպանման և հիվանդանոցային ծառայությունները: Ուշադրություն դարձրեք մատուցած ծառայության որակին: Արդյոք ծննդատանը մայրերը կամ ծննդկանները ստացել են անհրաժեշտ օժանդակություն նորածնին կրծքով կերակրելու հարցում (օրինակ՝ կրծքով կերակրման դիրքեր): Ուսումնասիրեք երեխաների բուժման համար ժամանակակից եղանակների առկայությունը (օրինակ՝ ոսկրածուծի տրանսպլանտացիան լեյկեմիայի դեպքում):
Ուսումնասիրեք վաղ տարիքի երեխաների սնուցմանը վերաբերող հարցերը և վերլուծեք համապատասխան վիճակագրությունը: Պարզաբանումների համար դիմեք ոլորտի մասնագետներին: Արդյոք մայրը կամ խնամողները ստանում են անհրաժեշտ խորհրդատվություն իրենց սպասարկող ընտանեկան բժշկից, տեղամասային մանկաբույժից կամ բուժքրոջից՝ սնունդը երեխայի տարիքին համապատասխան կազմակերպելու համար: Արդյոք առկա է մայրերի համար հասանելի տեղեկատվություն երեխայի առողջության ու սնուցման տարբեր հարցերի վերաբերյալ: Որո՞նք են այն հնարավոր գործոնները, որ կարող են անդրադառնալ երեխաների սնուցման վրա:

Հնարավոր բոլոր եղանակներով խրախուսեք մինչև 6 ամսական երեխային բացառապես կրծքով կերակրելը: Ի՞նչ խոչընդոտներ (օրինակ՝ մոր աշխատանքը) կարող են առաջանալ այս հարցում և ինչպե՞ս դրանք հաղթահարել:

ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ վարակակիր երեխաներն ինչպե՞ս են տեղավորվում հիվանդանոցներում և բուժում ստանում: Աջակցության ի՞նչ համակարգեր են գործում:

Ուսումնասիրեք այն միջավայրը, որում երեխաներն ապրում են, սովորում ու խաղում: Ի՞նչ է արվում (օրինակ, դպրոցներում) առողջ ապրելակերպի (սնունդ, թմրադեղեր, շրջակա միջավայրի աղտոտում, հանգիստ, ճանապարհային անվտանգություն, սեռական վարք, ծխել և սպորտ) վերաբերյալ իրազեկության բարձրացման համար:

Օգտվեք առողջապահական հարցեր լուսաբանող լրագրողների համար նախատեսված Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղենիշներից:

Մասնագետների խորհուրդները ներառեք ձեր հոդվածներում: Դրանք կօգնեն մարդկանց պատկերացում կազմել այս կամ այն հիվանդության, կանխարգելիչ միջոցառումների և բուժման մասին:

Երեխայի առողջական խնդիրները լուսաբանելիս պարտադիր խոսեք նաև նրա մոր ու բուժող բժշկի հետ: Իրավասու մարմիններից ստացեք անհրաժեշտ տեղեկություն, թե խնդրի վերաբերյալ պետությունն ինչ լուծումներ ունի երեխայի օգտին:

Եթե ձգտում եք երիտասարդներին էլ ավելի իրազեկել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերում՝ ձեր նյութերում ներառեք նաև նրանց պատմածներն այն որոշումների մասին, որոնց առջև կանգնած են

Ներկայացրեք «ապահով սեռական հարաբերությունների», ընդհանուր ասեղներից չօգտվելու և այլ կանխարգելիչ միջոցառումների մասին անչափահասների համար մատչելի տեղեկատվություն:

Համեմատեք սոցիալական տարբեր խմբերի երեխաների բնակության, կրթության, ժամանցի պայմանները: Ընդգծեք տարբերությունները, թերությունները (եթե դրանք կան):

Տեղեկությունը լրագրողի գործիքն ու զենքն է. հավասարակշռված ու բանիմաց լուսաբանումով կարելի է հասնել նրան, որ օրինակ՝ հիվանդ երեխային տրամադրվի հնարավոր լավագույն բուժումը:

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԸ

Ուսումնասիրեք՝ արդյոք երեխայի բնակության, սովորելու և խաղալու պայմանները նպաստում են երեխայի առողջ ապրելակերպին: Պարզեք՝ որքանով են երեխաները տեղեկացված առողջ ապրելակերպի կանոնների մասին (սննդակարգ, մարմնամարզություն, թմրամիջոցներ ու ծխախոտ, աղտոտվածություն և այլն):
Արդյոք ընտանեկան օրենսդրությունը հնարավորություն է տալիս առավելագույնս պաշտպանել երեխայի շահերը: Ի՞նչ խնդիրների են բախվում դեռահասները՝ կապված հղիության հետ և անչափահաս տարիքում ծնող դառնալիս: Կարևոր է իմանալ նաև նրանց կարծիքը և այն մասին, թե ինչպես է իրենց տարիքն անդրադառնալու երեխայի կյանքի վրա:
Լուսաբանեք, թե որքանով են ապահովված ծնողի անազատության մեջ լինելու պայմաններում կամ հատուկ հաստատություններում ծնված երեխայի պատշաճ խնամքի պայմանները: Ընդգծեք, թե ինչ ազդեցություն է ունենում մայրերի ազատազրկումը երեխաների վրա: Պատմեք բանտային պայմանների բարեփոխմանն ուղղված ծրագրերի ու միջոցառումների մասին: Լուսաբանեք, թե ուր են գնում երեխաները, երբ մայրը շարունակում է կրել ազատազրկումը, սակայն լրացել է երեխային ազատությունից զրկման վայրում պահելու թույլատրելի տարիքը:

Մասնագետի հետ խորհրդակցելով՝ մատչելի ու պարզ գրեք, թե կառավարության նոր քաղաքականությունը կամ ծրագրերն ինչ հնարավոր ազդեցություն կունենան ընտանիքների վրա: Այդ մասնագետները կարող են լինել թե՛ պետական, թե՛ հասարակական ոլորտի: Հրապարակված տեղեկությունը պետք է օգնի հասարակությանը՝ օժանդակել խնամքի ու պաշտպանության կարիք ունեցող երեխաներին կամ օգնի, որպեսզի նման երեխաներն անհրաժեշտ աջակցություն ստանան պետական և հասարակական կառույցներից:

Օրինակ՝ երբ լուսաբանում եք ամուսնալուծության դատական նիստ, որտեղ քննարկվում է նաև երեխաների հարց, հնարավորինս պարզ ներկայացրեք խնդիրը, որպեսզի հասկանալի լինի, թե ինչ իրավունքներից է օգտվում երեխան, երբ դատարանն ալիմենտի հետ կապված վճիռ է կայացնում:

Համոզվեք, որ խնամակալության վեճի մասին ձեր պատրաստած նյութը ճշգրիտ է ու փաստերով հիմնավորված:

Խուսափեք երեխաների անունները կամ նրանց անձնական այլ տվյալները նշելուց կամ զգացմունքներն անհարկի շահարկող նկարագրություններ հրապարակելուց:

Հանրային հետաքրքրություն ներկայացնող անձանց, հայտնի դեմքերի աղմկալից ամուսնալուծությունը լուսաբանելիս վերլուծեք, թե ձեր հաղորդումն ինչ հետևանքներ կարող է ունենալ տվյալ ընտանիքի երեխաների համար:

Եղեք նրբանկատ. հարցը քննարկեք ծնողների , խնամակալների, այլ օրինական ներկայացուցիչների և գործին մասնակից իրավաբանների հետ:

Պետության խնամքին հանձնված երեխաների մասին գրելիս հետաքրքրվեք, թե երեխայի անձնական տվյալների հրապարակման առումով սահմանափակման ինչ կանոններ են գործում: Պարզեք նաև, թե արդյոք ցանկության դեպքում երեխաները կարողանում են տեսնել իրենց ծնողներին: Ծնողների մերձավոր ազգականներն այցելում են արդյոք և եթե այո՝ որքան հաճախ: Հնարավորության դեպքում, տեղեկությունը ստացեք հենց երեխայից ու պատասխանն ընդգրկեք ռեպորտաժում: Երեխայի դեմքը ցույց տվեք միայն այն դեպքում, երբ վստահ եք, որ դա օրենքի խախտում չէ, և բխում է բացառապես երեխայի լավագույն շահից: Հակառակ դեպքում փակեք երեխայի դեմքը, կամ ինքներդ վերարտադրեք նրա խոսքերը: Իհարկե, ցանկալի է բոլոր դեպքերում փակել երեխայի դեմքը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Կրթական համակարգի խնդիրները պարբերաբար վեր հանելիս նախ ընդգծեք, թե դրանք որքանով են ազդում հենց երեխաների վրա:

Արդյոք ձեր լրատվամիջոցում կան հենց կրթական թեմաներով մասնագիտացած լրագրողներ կամ նման հաղորդումներ: Որքանո՞վ են

դրանք ներառում երեխաների մասնակցությունը, և որքանո՞վ են մատչելի երեխաների համար:

Արդյոք կրթության վերաբերյալ ձեր հրապարակումներն արտահայտում են աշակերտների, ծնողների, ինչպես նաև ուսմասվարների և տնօրենների տեսակետները: Երեխաներին տեղեկացրե՞լ եք, որ կարող է հղում արվել նրանց խոսքին և ստուգե՞լ եք, որ ձեր հրապարակումը չի առաջացնի այնպիսի խնդիրներ, որոնց մասին իրենք չէին մտածել:

Արդյոք կրթական հաստատություններում երեխաներին սովորեցնում են անվտանգ ապրելակերպի, այդ թվում՝ համացանցից ճիշտ օգտվելու, երթևեկության կանոնները այլն:

Ուսումնասիրեք կրթության համակարգում բոլոր երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովման իրական պատկերը (օրինակ՝ տղաների ու աղջիկների, գյուղական ու քաղաքային վայրերերում ապրող երեխաների, հաշմանդամություն ունեցող երեխաների և փոքրամասնություն կազմող համայնքների երեխաների համար):

Կարո՞ղ են երեխաներն իրենք ընտրել այն պարապմունքները, որոնց ուզում են մասնակցել: Ծնողական և աշակերտական խորհուրդները կարող են արդյոք ազդել դպրոցական ծրագրի ու կրթական ծառայությունների վրա: Ինչպիսին է սովորողների դերը դպրոցի կառավարման գործում: Համեմատեք տարբեր կրթական հաստատություններ՝ նախադպրոցական, տարրական ու միջնակարգ, պետական և մասնավոր: Կան արդյոք երեխաներ, ովքեր դուրս են մնում կրթությունից ծառայությունների բարձր վճարների կամ այլ պատճառով:

Ուսումնասիրեք ուսուցիչ-աշակերտ թվային հարաբերակցությունը: Ի՞նչ նշանակություն կամ ազդեցություն ունի դասասենյակի չափն ու դասարանի աշակերտների թիվը, օրինակ՝ փոքր դասասենյակում մեծ թվով աշակերտներ կամ հակառակը: Ի՞նչ ուսումնատեխնիկական միջոցներից են օգտվում ուսուցիչները: Երեխաները կարողանում են արդյոք օգտվել ժամանակակից սարքավորումներից: Ուսումնասիրեք դպրոցական շենքերի անվտանգությունը:
Ընդունվու՞մ են «այլընտրանքային» կրթության սկզբունքները: Ինչպիսի՞ն են դասավանդման մեթոդներն ու հաճախումները: Համեմատվու՞մ են

կարգապահությունը և արդյունքները սովորական դպրոցների պայմանների հետ:

Արդյոք դաստիարակչական միջոցներն արդարացված են և համարժեք, թե ունեն պատժիչ բնույթ: Ինչպե՞ս են արձագանքում մանկավարժներն ու տնօրեններն այն դեպքերին, երբ աշակերտները վիճում են իրար հետ կամ վնասում իրար, բռնություն գործադրում մեկը մյուսի նկատմամբ և այլն: Արդյոք առկա են ուսուցիչների նկատմամբ բռնության դեպքեր: Եթե այդպիսի դեպքեր առկա են, որո՞նք են պատճառները:

Կրթությունից դուրս մնացող երեխաներին կրթություն վերադարձնելու համար ի՞նչ քայլեր են ձեռնարկվում: Պարզեք երեխայի դպրոց չհաճախելու պատճառները (սոցիալական, առողջական, թե՞ ծնողները չարամտորեն խուսափում են երեխայի կրթության իրավունքի իրացման ապահովումից):

ԵՐԵԽԱՅԻ ԱՐԳԵԼՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ

Որքանո՞վ է հայաստանյան օրենսդրությունը պաշտպանում երեխաներին աշխատանքային թրաֆիքինգից՝ պարտքի դիմաց աշխատացնելուց, առևտրային նպատակներով սեռական շահագործումից և այլն: Նման խնդիրների վերաբերյալ ռեպորտաժ պատրաստելու համար անհրաժեշտ է դիմել մասնագետների օգնությանը:

Գտեք մանկական աշխատանքի թաքնված ձևեր՝ գործարաններում և արտադրական օբյեկտներում երեխաների աշխատանքի գաղտնի շահագործում, մարմնավաճառություն, աղջիկների օգնությունից տանը օգտվելու համար նրանց դպրոց հաճախել չթույլատրելը և այլն:

Պատմեք աշխատող երեխաների մասին, սակայն մի բացահայտեք նրանց ինքնությունը: Պատմության մեջ ներառեք, թե քանի ժամ են աշխատում, որքան են վարձատրվում, արդյոք իրենց կամքով են աշխատում և կարող են ազատ թողնել աշխատանքը և այլն: Ընդ որում, երեխաների թույլատրելի աշխատանքի ձևերն ու առավելագույն աշխատաժամանակը կարգավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Պետք է ուշադրություն դարձնել, թե հսկողություն կամ վերահսկողություն իրականացնող մարմիններն ինչ հաճախականությամբ են ստուգողական

գործողություններ կատարում: Ի՞նչ դեր ունեն դրանում արհմիությունները:

Ստուգեք, թե որտեղից է ապրանքը հասնում խոշոր խանութներ: Տնօրինությանը հայտնի է, թե երբ և ինչպես են արտադրվում ապրանքատեսակները: Եթե կան աշխատանքում շահագործվող երեխաներ, պարզեք՝ սպառողներն արդյոք տեղյակ են ու ինչ կարծիք ունեն:

Որոշ ընտանիքներ հիմնվում են երեխաների վրա, որպեսզի կարողանան ապահովել հիմնական ընտանեկան եկամուտը կամ վարել ընտանեկան բիզնես: Արդյոք այդ երեխաները շահագործվում են, թե կազմում են տվյալ տնային տնտեսության կենսական մասը: Քանի՞ ժամ են աշխատում երեխաները: Ունե՞ն այլընտրանք: Արդյոք դա նրանց դպրոցից հետ չի պահում:

Կարևոր է գրել այն դեպքերի մասին, երբ գործատուները դատական պատասխանատվության են ենթարկվում փոքր տարիքի երեխաներին աշխատացնելու համար կամ պատժվում են այն պայմանների համար, որում աշխատում են երեխաները: Սա սթափեցնող օրինակ կլինի նաև մյուսների համար: Երեխաներն իրենք էլ ձեր հոդվածի շնորհիվ կտեղեկանան իրենց իրավունքների մասին:

Ուշադրություն հրավիրեք երեխայի արգելված աշխատանքի առավել ակնհայտ ձևերի վրա (փողոցային առևտուր, ավտոլվացում, ցրիչներ և այլն): Պարզեք, թե ինչու, ում համար և ինչ վարձատրության դիմաց են աշխատում այդ երեխաները: Արդյոք ձեր հրապարակումը կամ նյութը վերաբերում է աշխատող երեխաներին սպառնացող վտանգներին և բացահայտում նրանց, ովքեր ստիպում են երեխաներին աշխատել կամ շահագործում են նրանց:

Զրուցեք հասարակական կազմակերպությունների, այդ թվում նաև արհմիությունների ներկայացուցիչների հետ, որոնք կարող են տրամադրել տեղեկություններ առևտրային շահագործման դեպքերի վերաբերյալ: Ձեր հրապարակումների հարցում նրանք կարող են ձեզ օգտակար լինել՝ տրամադրելով կարևոր տվյալներ:

Ինչպե՞ս ու ինչու՞ է սահմանվել աշխատանքի անցնելու պաշտոնական նվազագույն տարիքը: Արդյոք աշխատող երեխան դուրս է մնում կրթությունից, ինչպե՞ս է աշխատանքն ազդում կրթության որակի վրա: Առհասարակ ինչպե՞ս է կազմակերպվում երեխայի աշխատանքը՝ օրերն ու ժամերը: Հարկավոր է գրել նաև այն մասին, թե որքանո՞վ են պահպանվում ՀՀ աշխատանքային օրենսգրքով կարգավորվող այս հարցերը:

Անհրաժեշտ է մտածել լուսաբանման ապահով տարբերակներ՝ աշխատող երեխաների տեսակետն ու ձայնը լսելի դարձնելու համար: Օրինակ չհրապարակել անունն ու ազգանունը, կամ կեղծանունով ներկայացնել, անել ամեն բան, որ երեխայի ինքնությունը չպարզվի հոդվածում կամ ռեպորտաժում:

Պետք է պարբերաբար ուշադրության կենտրոնում պահել փողոցային առևտուր իրականացնող, ասենք, հատով ծաղիկ, անձեռոցիկ կամ սրբապատկերներ վաճառող, ավտոլվացման կետերում աշխատող երեխաների իրավունքներին, զրուցել նրանց հետ, թե ինչու են այդ աշխատանքով զբաղվում, ում համար կամ ում դրդմամբ են աշխատում, ինչ վարձատրությամբ և այլն: Այսօրինակ դեպքերում ցանկալի է երեխային դեմքով չցուցադրելը, եթե երեխան ինքը կամ նրա ծնողները դեմ են: Եթե ներկայացվում է հաջողված պատմություն, որը բացասական ազդեցություն չի ունենալու երեխայի հետագա կյանքի համար, գուցե նաև կարելի է դեմքով նկարահանելը:

Առհասարակ, անհրաժեշտ է հնարավորինս շատ լուսաբանել երեխաներին սպառնացող վտանգներին առնչվող թեմաները: Ուսումնասիրեք, թե ովքեր են նրանց իրավունքները խախտողները կամ նրանց աշխատանքային թրաֆիքինգի ենթարկողները: Այդ կերպ իրականացնելով ինչպես կանխարգելիչ գործունեություն, այնպես էլ նպաստելով նման դեպքերի բացահայտմանը՝ չպետք է մոռանալ երեխայի լավագույն շահի մասին:

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Երեխաների մասին հաղորդում կամ հոդված պատրաստելիս պետք է ներկայացվեն կոնկրետ փաստերը: Խուսափեք չհիմնավորված

ընդհանրացումներից: Պետք է խուսափել խտրական ձևակերպումներից, օրինակ՝ ազգությամբ եզդի (պայմանական) երեխաների մասնակցությամբ (պատճառով), տվյալ համայնքում «հանցագործության աճ» է գրանցվել: Նման ձևակերպումներն ազգային փոքրամասնությունների դեմ խտրականություն կարող են սերմանել:

Ռեպորտաժում երեխայի ռասան, ազգային պատկանելիությունը, կրոնը կամ հաշմանդամություն ունենալու փաստը պետք է նշել միայն այն դեպքում, եթե դրանք ուղղակիորեն առնչվում են արծարծվող թեմային:

Ազգային փոքրամասնության պատկանող երեխաների վերաբերյալ ձևակերպումները չպետք է վիրավորանքի տարրեր պարունակեն կամ նպաստեն կարծրատիպերի ձևավորմանը:

Նախքան հրապարակելը կրկնակի ստուգեք, թե արդյոք նյութը պարունակում է երեխայի մշակութային, էթնիկական կամ կրոնական ծագման վերաբերյալ ենթադրություններ:

Ազգային փոքրամասնությունների, ռասիզմի մասին գրելիս խորհրդակցեք այդ թեմաներով մասնագիտացած լրագրողների, ազգագրագետների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Լսեք երեխայի տեսակետներն ու արձագանքը:

ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ վարակակիր երեխայի մասին հաղորդում կամ հոդված պատրաստելիս պարտադիր խորհրդակցեք նրա բժշկի հետ: Բայց հիշեք, որ բժիշկը կարող է տրամադրել երեխայի առողջական վիճակի մասին տեղեկություններ բացառապես երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի համաձայնությամբ:

Զերծ մնացեք նյութը զգայական շեշտադրումներով ներկայացնելուց: Ներկայացրեք բացառապես ստուգված փաստեր և դրանց վրա հիմնված վերլուծություն:

ԵՐԵԽԱՆ ԵՎ ԶԻՆՎԱԾ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ

Զինված ընդհարումների ժամանակ երեխաների իրավունքների ապահովման վիճակը լրագրողի ուշադրությանը պետք է արժանանա: Կարևոր է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

- արդյոք պատերազմական իրավիճակների ընթացքում տուժած ընտանիքներին տրվում է համապատասխան օգնություն.
- արդյոք երեխաները ժամանակին են տարհանվում ու տեղափոխվում առավել ապահով վայր.
- արդյոք կրթօջախները փակվում են, եթե այո՝ որքան ժամանակով:

Հաղորդման կամ այլ նյութի շրջանակներում անդրադարձեք, թե այդ իրավիճակներում դրսում միայնակ հայտնված երեխան ինչպես պետք է պատսպարվի: Հրապարակեք մասնագետների խորհուրդները: Խոսեք երեխայի հետ, տեղեկացեք, թե ինչպես է երեխան իրեն զգում գնդակոծությունների ժամանակ: Մարմնական վնասվածքները ներկայացրեք հնարավորինս զգույշ, խուսափեք խոշոր պլանով մարմնի վերքերն ու վնասվածքները ցուցադրելուց:

Տեսանյութում, հոդվածում և այլ հրապարակումներում ընդգծեք պատերազմական իրավիճակում կառավարության ստանձնած պարտավորությունները երեխաների նկատմամբ (ՄԱԿ ԵԻԿ, Ժնևի 4-րդ կոնվենցիա և արձանագրություններ, 1997 թվականի Քեյփթաունի սկզբունքները): Զինվորական, ոստիկանական և արտակարգ իրավիճակների ծառայություններն արդյոք անցնում են երեխաներին պաշտպանելու հատուկ պատրաստություն:

Ընդհարման գործողություններում ներքաշված երեխայի նկարներն օգտագործելը կարող է բացասական հետևանք ունենալ նրա համար (սպանություն, պարսավանք կամ խտրականություն): Վայրագությունների ականատես երեխայի ինքնությունը պետք է գաղտնի պահել: Միաժամանակ, կարելի է խոսել երեխայի հետ, նրանից տեղեկանալ, թե օրինակ՝ ինչ է տեսել ռմբակոծության ժամանակ: Վերարտադրել ընդհարման ժամանակ երեխայի պատմածն իր տեսածի, լսածի ու զգացածի մասին:

Անհրաժեշտության դեպքում ապահովեք, որ այն երեխան, ում փորձի մասին հաղորդում եք, արժանավայել վերաբերմունք ստանա: Հարգեք անանուն մնալու նրա ցանկությունը կամ իրավիճակից բխող հրամայականը: Խուսափեք երեխային «տանջանքի սրբապատկեր» դարձնելուց, մի ձգտեք բացառապես արցունք կորզող ռեպորտաժներ պատրաստել, որքան էլ դա կարող է դիտումների մեծ քանակ ապահովել:

ԵՐԵԽԱՅԻ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆԸ

Վերլուծական հաղորդումներ պատրաստեք ՀՀ քաղաքացիության հարցերը կարգավորող գործող օրենսդրության վերաբերյալ՝ մասնավորապես անդրադառնալով երեխայի հետ կապված հարցերին: Ներկայացրեք, թե ե՞րբ և ինչպե՞ս կարող է երեխան ինքնուրույն որոշել իր քաղաքացիությունը: Ներկայացրեք նաև, թե ի՞նչ պայմաններում և կարգով երեխան կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն:

Ուսումնասիրեք, թե ինչպես է ապահովվում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երեխաների կրթություն ստանալու իրավունքը: Արդյոք կրթական հաստատությունում ապահովված են նրանց համար հավասար պայմաններ:

Ազգային փոքրամասնությանը պատկանող երեխայի վերաբերյալ նյութ պատրաստելիս քայլեր ձեռնարկեք դրանք երեխային հասկանալի լեզվով ներկայացնելու համար, օրինակ՝ ապահովեք նյութի թարգմանությունը:

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՅԱՑՔՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվի առնելով երեխայի տարիքային և անձնային առանձնահատկությունները՝ հարցազրույցի ընթացքում պետք է լինեք նրբանկատ, որպեսզի երեխային չպարտադրեք իր համար դժվար ըմբռնելի կամ ոչ ընդունելի արժեքներ ու հայացքներ:

Ցանկալի է, որ ռեպորտաժը կամ հոդվածն ունենա հերոս, ով երեխայի համար մատչելի ձևով կներկայացնի նրա իրավունքը (այս կամ այն խնդրի շուրջ):

Երեխայի բողոքները կամ դժգոհությունները լուսաբանելիս խորհրդակցեք համապատասխան մասնագետների հետ՝ բացառելու համար հարցազրույցից հետո երեխայի հետապնդման, բռնության կամ հակահարվածի այլ ձևերի ենթարկվելու հնարավորությունը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՆԱՄՔԻՑ ՕԳՏՎՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԸ

Պետության խնամքի տակ գտնվող երեխաների իրավունքների ապահովման վիճակը ներկայացնելիս պարզեք, թե հատուկ հաստատություններում երեխաներն ինչ պայմաններում են ապրում ու սովորում: Ի՞նչ քայլեր են ձեռնարկվում պետության կողմից (օրինակ՝ մանկատան սաներին հետագայում արդյոք տրամադրվում են բնակարաններ, ինչպիսի՞ն են դրանց պայմանները): Արդյոք հատուկ հաստատություններում գտնվող երեխաները ենթարկվում են ֆիզիկական պատիժների: Արդյոք ապահովվում են վերջիններիս պատշաճ սնունդը և բժշկական օգնությունը: Արդյոք հոգեբանական աշխատանքներ կատարվում են երեխաների հետ: Երեխաներն արդյոք ունեն իրենց խնդիրները բարձրաձայնելու հնարավորություն, ի՞նչ արձագանք են ստանում դրանք:

Պետության խնամքի տակ գտնվող երեխաների թիվն ամեն տարի աճու՞մ է, թե նվազում (երկու դեպքերում էլ պատճառները պետք է նշել): Պարզեք՝ արձանագրվե՞լ են հատուկ հաստատություններից երեխայի փախուստի դեպքեր: Եթե այո, որո՞նք են եղել պատճառները, և այդ փախուստներն ի՞նչ հետևանքներ են ունեցել երեխաների համար:

Պարզեք՝ որդեգրման ու խնամակալ կամ խնամատար ընտանիքի երեխային հանձնելու ժամանակ որքանո՞վ և ո՞ր տարիքից է հաշվի առնվում երեխայի կարծիքը:

Արդյոք Հայաստանի Հանրապետությունում երեխա որդեգրելը կամ նրան այլ պետություն տանելը և երեխայի խնամքի նկատմամբ վերահսկողությունը կարգավորված են: Արդյոք այս դեպքում երեխան ունի ընտրության հնարավորություն և առկա է նրա կարծիքը հաշվի առնելու հնարավորություն:
Հաղորդում կամ հոդված պատրաստելիս հետաքրքրվեք, թե որոնք են այն հիմնական պատճառները, որ երեխան հայտնվել է պետության խնամքի ներքո:

ԵՐԵԽԱՆ ԵՎ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Զգուշացրեք երեխաներին, թե ինչպես կարող են հեռու մնալ հանցանքից:

Պարզեք՝ արդյոք հասարակությունն ու իրավապահ մարմինները իրավախախտ, այդ թվում՝ հանցանք կատարած երեխային այլ կերպ են վերաբերվում, քան մեծահասակին: Ինչպե՞ս են վերաբերվում հանցագործության հետևանքով տուժած երեխային: Ինչպե՞ս են պաշտպանվում և մշտադիտարկման ենթարկվում անչափահաս իրավախախտների, այդ թվում՝ հանցանք կատարածների իրավունքները: Արդյոք դատավորները, քրեական հետապնդման մարմինների ու պատիժը կատարող հիմնարկների ներկայացուցիչները անցնում են վերապատրաստումներ երեխաների իրավունքների վերաբերյալ: Հավաստիության ի՞նչ աստիճան ունեն անչափահասների ներկայացրած տեղեկությունները կամ գործողությունները իրավապահ մարմինների համար:

Պարզեք՝ ինչ պատկերացումներ ունի երեխան ոստիկանության գործունեության վերաբերյալ: Ինչպե՞ս է ոստիկանությունը վերաբերվում հատկապես մուրացկանությամբ ու թափառաշրջիկությամբ զբաղվող ձերբակալված երեխային:
Ուսումնասիրեք՝ իրավախախտ երեխայի վերաբերյալ տեղեկություններ հրապարակելու ինչ սահմանափակումներ են առկա: Պարզեք՝ ինչ տեղեկություններ կարող եք հրապարակել երեխաների մասնակցությամբ քննությունների, դատական գործերի, ազատությունից զրկված երեխաների վերաբերյալ:
Անդրադարձեք հարցին՝ արդյոք ՀՀ-ում անչափահասների արդարադատության համակարգն առավելապես վերականգնողական կամ պատժիչ բնույթ ունի: Անչափահասների արդարադատության բարեփոխմանն ուղղված ի՞նչ քայլեր են ձեռնարկվում:
Արդյոք ֆիզիկական պատիժը դեռ կիրառվում է: Արդյոք ազատազրկումը կիրառվում է միայն որպես ծայրահեղ միջոց: Արդյոք հանցանք կատարած անչափահասի նկատմամբ սահմանվում են դաստիարակչական բնույթի միջոցներ, փորձաշրջաններ ու վերականգնման ծառայություններ, որքանո՞վ են դրանք արդյունավետ:

Ուսումնասիրեք՝ արդյոք երեխաների շրջանում տարածված են թմրամիջոցների օգտագործումն ու թունամոլությունը, որո՞նք են դրանց պատճառները: Ինչպե՞ս են դրանք հասանելի դառնում երեխային: Արդյոք իրավախախտ է համարվում թմրամիջոց գործածող երեխան: Այդ երեխան ի՞նչ բժշկական և վերականգնողական ծառայություններ է ստանում:

Խուսափեք անչափահաս իրավախախտի անունն ու անձնական այլ տվյալները հրապարակելուց, եթե դա կարող է որևէ կերպ վնասել նրա հետագա վերականգնմանն ու սոցիալականացմանը:

Անդրադարձեք նաև այն հարցին, թե արդյոք իրավախախտման, այդ թվում՝ հանցանքի կատարման մեջ մեղադրվող կամ հասարակության կողմից պարսավանքի ենթարկվող երեխային տրվում է դրանցից պաշտպանվելու հնարավորություն (օրինակ՝ իրավաբանական օգնություն, իրենց կարծիքը հրապարակային դարձնելու հնարավորություն):

Մտածեք՝ իրավախախտ երեխայի նկատմամբ իրականացվող հետապնդման, նրա վերաբերյալ ձեր հաղորդման կամ այլ նյութի շարունակությունը պատրաստելու մասին: Ի՞նչ կարգավիճակում է այդ երեխան: Ազատությունից զրկված լինելու դեպքում ի՞նչ պայմաններում է նա պահվում, արդյոք օգտվում է իր իրավունքներից (օրինակ՝ իրավաբանական օգնություն, բժշկական ծառայություններ և այլն):

ԵՐԵԽԱՅԻ ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ՈՒ ՉԱՐԱՇԱՀՈՒՄԸ

Հաղորդեք սեռական դաստիարակության և սեռական ազատության ու անձեռնմխելիության՝ երեխային առնչվող սահմանափակումների վերաբերյալ: Ներկայացրեք՝ որն է սեռական ազատության կամ այդպիսի համաձայնություն տալու նվազագույն տարիքը:

Ուսումնասիրեք երեխայի սեռական չարաշահման ու շահագործման խնդիրը: Պարզեք՝ որոնք են խնդրի հիմնական պատճառները: Օգտագործեք ընտանիքներում սեռական չարաշահման տարածվածության վերաբերյալ այլ երկրների տվյալները: Արդյոք շահագործման զոհ դարձած երեխան (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող և ազատությունից զրկված անչափահասները) հնարավորություն ունի իրավասու մարմիններին հաղորդել ընտանիքում, դպրոցում կամ հաստատությունում իր նկատմամբ այդպիսի չարաշահումների մասին:

Այդ գործերով դատարանում ցուցմունք տվող երեխան օգտվու՞մ է պաշտպանությունից և ստանու՞մ է աջակցություն: Արդյոք նրանց վերաբերվում են՝ որպես հանցանք կատարածի: Արդյոք քրեական գործի

քննությունը չի վնասում նրանց: Լրագրողական հետաքննություն անցկացրեք երեխաների նկատմամբ սեռական չարաշահումների մասին տեղեկությունների կապակցությամբ՝ ապահովելով պատշաճ անվտանգություն և մասնագիտական օժանդակություն ինչպես երեխաների, այնպես էլ լրագրողների համար:

Արդյոք երեխաների սեռական չարաշահման կամ առևտրային նպատակներով սեռական շահագործման մասին ձեր պատմությունը լիովին ճիշտ է: Արդյոք դրա «շոկային արժեքը» չափազանցվել է, նույնիսկ եթե մերկացնում է հանցագործություն կամ պաշտոնեական անփութություն:

Արդյոք սեռական չարաշահման կամ շահագործման ենթարկված երեխային պատկերել եք որպես զոհի, հանցագործի, թե՞ որպես մարդու , ով ունի իրավունք և արժանապատվություն: Արդյոք հնարավոր էր կամ տեղին իր շահերը ներկայացնելու հնարավորություն տալ նաև երեխային: Հնարավո՞ր է, որ ձեր խոսքերն ու նկարները, այդպիսի դիտավորություն չունենալով, բացահայտեն չարաշահված երեխային: Ձեր պատմածը տեղեկացնու՞մ է, թե ինչպես տեսնվել անպաշտպան երեխաների հետ:

Երեխան տվե՞լ է իրեն լուսանկարելու համաձայնություն: Արդյոք ստացել եք նաև երեխայի ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների համաձայնությունը:

Որո՞նք են հրապարակման հնարավոր հետևանքներն ու նպատակները: Կա՞ վստահելի հեռախոսային օգնության գիծ այն մարդկանց պատասխանելու համար, ովքեր ցանկանում են հայտնել սեռական չարաշահման կամ շահագործման այլ դեպքերի մասին: Ի՞նչ օժանդակություն կա այն լրագրողների համար, որոնց կարող են վնաս հասցնել այդպիսի թեմաներ լուսաբանելու համար:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպե՞ս է կառավարությունն ապահովում «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի դրույթների կիրառությունը: Արդյոք այն կատարել է կոնվենցիայի սկզբունքներն ու դրույթները հրապարակելու պահանջը: Կառավարությունն իր հաշվետվությունը Երեխաների իրավունքների

Ժնևի հանձնաժողով ժամանակի՞ն է ներկայացնում, թե՞ ոչ: Արդյոք անցկացվում են հանրային խորհրդակցություններ:

Հարցազրույց վերցրեք պաշտոնյաներից, ովքեր վերահսկում են կոնվենցիայի իրականացումը: Ծանոթացեք Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը: Պարզեք՝ արդյոք պետությունը կատարում է Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկությունները՝ որպես մշտադիտարկում կատարող մարմին: Առաջընթացի (թերացումների) մասին գրեք: Հարցրեք երեխաներին, թե ի՞նչ հարցերի պատասխաններ կցանկանային ստանալ: Աշխատեք պաշտոնյաներից խոստումներ ստանալ, որ երեխաներին վերաբերող առանձին հարցերում նրանց նկատմամբ հոգատար քաղաքականություն կմշակվի կամ միջոցառումներ կձեռնարկվեն:

Երեխաների կյանքը բարելավելու համար կառավարությունն ինչպե՞ս է համագործակցում կազմակերպությունների ու դրանց ներկայացուցիչների հետ: Այդ կազմակերպություններն իրենց առանձին հաշվետվությունները ներկայացրե՞լ են Երեխաների իրավունքների հանձնաժողով: Որքանո՞վ են ճշգրիտ նրանց հավաքած տվյալներն ու արդյոք կասկածի են ենթարկում կառավարության պնդումները:

Հաճախ խոսեք փորձագետների, երեխաների իրավունքների ակտիվիստների և հենց երեխաների հետ՝ վերջիններիս խնդիրներին տեղեկանալու համար:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.

Երեխայի իրավունքների կոնվենցիան

Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների կոնվենցիան (ՄԱԿ ԵԻԿ) ամրագրում է պետությունների ու անհատների պարտականությունները բոլոր երեխաների իրավունքների խթանման ու պաշտպանության հարցում:

Վավերացնելով կոնվենցիան՝ պետությունները պարտավորվել են ապահովել, որ երեխաները մեծանան ապահով ու բարեկեցիկ պայմաններում, օգտվեն բարձրորակ կրթությունից, առողջապահական ծառայություններից և պատշաճ կենսամակարդակից: ՄԱԿ ԵԻԿ-ի ստորագրմամբ, կառավարությունները համաձայնել են պաշտպանել երեխաներին խտրականությունից, սեռական չարաշահումից, առևտրային շահագործումից ու բռնությունից և հատուկ հոգածություն են ստանձնել ծնողազուրկ երեխաների ու փախստական երեխաների նկատմամբ:

Միաժամանակ պետություններն ընդունել են, որ երեխաներն ունեն՝

- իրենց կարծիքը, հատկապես իրենց վերաբերող որոշումների վերաբերյալ արտահայտելու իրավունք.
- մտքի, արտահայտվելու, խղճի ու դավանանքի ազատության իրավունք.
- իրենց անձնական կյանքը ունենալու և խաղալու իրավունք.
- իրենց ակումբներն ու կազմակերպությունները հիմնելու իրավունք.
- տեղեկություններ ստանալու իրավունք, հատկապես պետությունից և լրատվամիջոցներից.
- իրենց հայտնի գաղափարները և տեղեկությունները տարածելու իրավունք:

ՄԱԿ ԵԻԿ-ը հիմք է երեխաների կյանքի բարելավմանն ուղղված կառավարությունների ջանքերը գնահատելու համար: Հինգ տարին մեկ անգամ այդ ուղղությամբ կատարված առաջընթացի վերաբերյալ կառավարությունները պարտավոր են հաշվետվություն ներկայացնել ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների հանձնաժողով: Նախքան այս կամ այն երկրի կողմից իր պարտավորությունների կատարումն ապահովելու

հետագա քայլերի վերաբերյալ առաջարկություններ անելը, հանձնաժողովը հանդիպում է տվյալ երկրի կառավարության ներկայացուցիչների հետ և լսում հասարակական կազմակերպությունների (ՀԿ) տեսակետները:

Շատ երկրներ ստորագրել են նաև զինված ընդհարումներին երեխաների մասնակցության, երեխաների վաճառքի, մանկական մարմնավաճառության և պոռնոգրաֆիայի վերաբերյալ ՄԱԿ ԵԻԿ-ի լրացուցիչ արձանագրությունները: Այդ փաստաթղթերով, որ ուժի մեջ են մտել 2002 թվականի սկզբին, կառավարություններից պահանջվում է առանձին հաշվետվություններ ներկայացնել երեխաների շահագործման նշված ձևերի դեմ ծավալած պայքարի վերաբերյալ: Համեմատաբար վերջերս շատ երկրներ համաձայնեցին իրականացնել նաև 2000 թվականի դեկտեմբերին ստորագրված ՄԱԿ-Ի Անդրազգային կազմակերպված հանցագործության կոնվենցիայի «Պալերմոյի արձանագրությունը», որը վերաբերում է կանանց ու երեխաների վաճառքին:

ՄԱԿ-ի բոլոր անդամ պետությունները համաձայնել են աշխատել Կայուն զարգացման 17 նպատակներին հասնելու համար, որոնք պետք է նշանակալի փոփոխություններ առաջացնեն երեխաների կյանքում: Առնվազն 150 երկրներ վավերացրել են նաև Աշխատանքի միջազգային կազմակերպության 2000 թվականի գործողության ուժ ստացած 182-րդ կոնվենցիան, որն ուղղված է երեխաների աշխատանքի ամենավատթար ձևերի վերացմանը (սեռական եղծումը ներառյալ): Այս փաստաթղթերում արտահայտված ձգտումները հարուստ նյութ են լրագրողական մշակումների համար: Զանգվածային լրատվամիջոցների կողմից հետաքրքրության ցուցաբերումը լավագույն երաշխավորն է այն բանի, որ լուրջ ջանքեր կգործադրվեն երեխաների կյանքում իրական փոփոխություններ առաջացնելու համար:

Երեխայի իրավունքների կոնվենցիայի ամփոփ շարադրանքը լրագրողների համար

Կոնվենցիայի նախաբանում ներկայացված են ՄԱԿ-ի հիմնական սկզբունքները, հատկապես խաղաղության ոգին, հանդուրժողականությունը, ազատությունը, հավասարությունն ու

համերաշխությունը և մարդու իրավունքների համաձայնագրերի ու հռչակագրերի համապատասխան դրույթները:

Լրագրողների պարտականությունների մասին հատուկ նշում չկա, սակայն որպես հասարակության արթուն պահակ՝ լրատվամիջոցներն իրենց հատուկ դերն ունեն այն ժամանակ, երբ կառավարություններն անտեսում են երեխաների նկատմամբ իրենց պարտավորությունները:

1. Ո՞վ է երեխա համարվում
18 տարին չլրացրած բոլոր մարդիկ, եթե օրենքով չափահասության ավելի վաղ տարիք սահմանված չէ:

2. Խտրականության արգելք
Բոլոր իրավունքները կիրառելի են բոլոր երեխաների համար առանց որևէ խտրականության և պետությունը պարտավոր է երեխաներին պաշտպանել խտրականության ցանկացած ձևից: Պետությունը չպետք է խախտի որևէ իրավունք և պարտավոր է դրական միջոցներ ձեռնարկել այդ բոլոր իրավունքները խթանելու համար:

3. Երեխայի շահերի լավագույն ապահովումը
Երեխաներին առնչվող բոլոր գործողությունների ժամանակ պետք է լիովին հաշվի առնվի նրանց շահերի լավագույն ապահովումը:
Պետությունը պարտավոր է ապահովել պատշաճ խնամք, երբ ծնողները կամ երեխայի համար պատասխանատու այլ անձինք այդ չեն անում:

4. Իրավունքների իրականացում
Պետությունը պարտավոր է կենսագործել կոնվենցիայում ամրագրված իրավունքները:

5. Ծնողական դաստիարակությունը և երեխայի զարգացող ունակությունները
Պետությունը պարտավոր է հարգել երեխաներին պատշաճ ուղղություն և կողմնորոշում տալու՝ ծնողների կամ ընդլայնված ընտանիքի իրավունքներն ու պարտականությունները նրանց կողմից իրենց իրավունքներն իրականացնելիս:

6. Գոյատևում և զարգացում
Երեխան ունի ապրելու անքակտելի իրավունք, և պետությունը պարտավոր է ապահովել երեխայի առավելագույն գոյատևումն ու զարգացումը:

7. Անունը և քաղաքացիությունը

Ամեն երեխա իր ծննդյան պահից ունի անուն ունենալու և քաղաքացիություն ստանալու իրավունք:

8. Երեխայի ինքնության պահպանումը

Պետությունը պարտավոր է աջակցել երեխայի ինքնության վերականգմանը և պահպանմանը, իսկ անհրաժեշտության դեպքում, վերականգնել երեխայի ինքնությունը (անունը, քաղաքացիությունը և ընտանեկան կապերը)

9. Ծնողներից բաժանումը

Երեխաներն ունեն իրենց ծնողների հետ ապրելու իրավունք, եթե դա չի հակասում նրանց շահերին, ունեն ծնողների հետ կապ պահպանելու իրավունք, եթե բաժանված են ծնողներից մեկից կամ երկուսից, ունեն իրենց ծնողների գտնվելու վայրի մասին պետության կողմից տեղեկացվելու իրավունք, եթե այդ բաժանումը պետության կողմից ձեռնարկված գործողության հետևանքն է:

10. Ընտանիքի վերամիավորումը

Ընտանիքի վերամիավորվման համար երեխաները և նրանց ծնողներն ունեն ցանկացած երկրից ելքի և իրենց երկիր մուտքի կամ երեխա-ծնող հարաբերությունները պահպանելու իրավունք:

11. Ապօրինի տեղափոխումը և չվերադառնալը

Պետությունը պարտավոր է փորձ անել կանխելու երեխաների առևանգումը կամ նրանց այլ երկրում պահելը ծնողի կամ մեկ ուրիշի կողմից:

12. Երեխայի կարծիքը

Երեխան ունի կարծիք արտահայտելու իրավունք, որը պետք է հաշվի առնվի երեխային առնչվող ցանկացած հարցում կամ ընթացակարգի շրջանակում:

13 Արտահայտվելու ազատություն

Երեխաներն ունեն տեղեկություններ ստանալու և հայտնելու, և իրենց տեսակետն արտահայտելու իրավունք, եթե դա չի հակասում ուրիշների իրավունքներին:

14. Մտքի, խղճի և դավանանքի ազատություն

Երեխան ունի մտքի, խղճի և դավանանքի ազատություն՝ ըստ ծնողների կողմից տրվող պատշաճ կողմնորոշման և ազգային օրենքի:

15. Միավորման ազատություն

Երեխան իրավունք ունի մասնակցել միավորումների և խաղաղ հավաքների, միանալ կամ հիմնել ընկերություններ, եթե դրանով չի խախտում այլոց իրավունքները:

16. Անձնական կյանքի պաշտպանությունը

Երեխաներն ունեն իրենց անձնական կյանքին, ընտանիքին, տանը և նամակագրությանը միջամտությունից, ինչպես նաև զրպարտությունից պաշտպանվելու իրավունք:

17. Տեղեկություններից պատշաճ օգտվելու իրավունք

Լրատվամիջոցները պարտավոր են երեխաների շրջանում տարածել նրանց համար սոցիալական, հոգևոր, բարոյական, կրթական և մշակութային օգտակար ինֆորմացիա, որը հարգում է նրանց մշակութային ինքնությունը: Պետությունը պետք է միջոցներ ձեռնարկի երեխաների համար արժեքավոր նյութերի հրապարակումներ խրախուսելու համար և երեխաներին պաշտպանի վնասակար նյութերի հրապարակումից:

18. Ծնողների պարտավորությունները

Երեխաներին դաստիարակելու առաջնային պարտականությունը երկու ծնողներինն է, իսկ պետությունը նրանց պետք է օժանդակի այդ գործում:

19. Պաշտպանություն չարաշահումներից և անտեսումից

Պետությունը պարտավոր է երեխաներին պաշտպանել ծնողների կամ երեխաների խնամքի համար պատասխանատու այլ անձանց կողմից նրանց նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնության բոլոր ձևերից և այդ առնչությամբ ձեռնարկի կանխման կամ բուժման ծրագրեր:

20. Ընտանիքից զուրկ երեխաների պաշտպանությունը

Պետությունը պարտավոր է հատուկ պաշտպանություն տրամադրել ընտանեկան միջավայրից զրկված երեխաներին և ապահովել պատշաճ այլընտրանքային ընտանեկան խնամք կամ տեղավորել հաստատությունում, հաշվի առնելով երեխայի մշակութային ինքնությունը:

21. Որդեգրում

Այն երկրներում, որտեղ որդեգրումը ճանաչվում և/կամ թույլատրվում է, այն պետք է իրականացվի միայն երեխայի շահերից ելնելով, երեխայի համար բոլոր անհրաժեշտ երաշխիքների ապահովմամբ և իրավասու մարմինների թույլտվությամբ:

22. Փախստական երեխաներ

Հատուկ պաշտպանություն պետք է տրամադրվի փախստական երեխաներին կամ այն

երեխաներին, ովքեր ցանկանում են փախստականի կարգավիճակ ստանալ: Պետությունը պարտավոր է համագործակցել այդպիսի պաշտպանության և օժանդակության հեղինակությամբ հայտնի կազմակերպությունների հետ:

23. Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն հատուկ խնամքի, կրթության և վերապատրաստումների իրավունք, որոնք մշակվում են օգնելու նրանց հասնել հնարավոր առավելագույն ինքնուրույնության և մասնակցության, որպեսզի լիարժեք ու ակտիվ կյանք վարեն հասարակության մեջ:

24. Առողջությունը և առողջապահությունը

Երեխան իրավունք ունի օգտվել առողջապահական ու բժշկական ամենաբարձր մակարդակի ծառայություններից, ընդ որում առաջին հերթին կարևորվում են առաջնային և կանխարգելիչ առողջապահական ծառայությունները, հանրային առողջապահական կրթությունը և մանկական մահացության կրճատումը: Պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել վնասակար ավանդական պրակտիկայի ձևերի վերացման համար: Երեխայի այդ իրավունքի ապահովման համար շեշտվում է միջազգային համագործակցության անհրաժեշտությունը:

25. Հաստատություններում տեղավորման պարբերական գնահատում

Պետության կողմից խնամքի, պաշտպանության կամ բուժման նպատակով հաստատությունում տեղավորված երեխայի իրավունքն է այդ հաստատության բոլոր հարցերի պարբերական գնահատումը:

26. Սոցիալական ապահովություն

Երեխաներն ունեն սոցիալական ապահովության աջակցությունից օգտվելու իրավունք:

27. Կենսամակարդակը

Երեխաներն իրավունք ունեն օգտվել պատշաճ կենսամակարդակից, որի տրամադրման հիմնական պարտականությունը ծնողներինն է, իսկ պետությունը պարտավոր է ապահովել, որ ծնողներն ի վիճակի լինեն կատարել այդ պարտականությունը:

Պետությունն, անհրաժեշտության դեպքում, կարող է նյութական օժանդակություն տրամադրել և կարող է ձգտել բացակա ծնողների կամ խնամակալների կողմից երեխայի խնամքի ծախսերի հատուցում ապահովելու համար:

28. Կրթությունը
Երեխան ունի կրթության իրավունք, և պետությունը պարտավոր է ապահովել, որ առնվազն տարրական կրթությունը լինի անվճար ու պարտադիր: Դպրոցական կարգապահության ապահովումը պետք է իրականացվի երեխայի մարդկային արժանապատվության վրա հիմնված մեթոդով: Երեխայի այդ իրավունքի ապահովման համար կարևորվում է միջազգային համագործակցությունը:

29. Կրթության նպատակները
Պետությունը պետք է ընդունի, որ կրթությունը հարկավոր է նպատակաուղղել երեխայի անհատականության ու ձիրքերի զարգացմանը, նրան պատրաստելով չափահաս տարիքում ակտիվ կյանքի, նպաստելով մարդու հիմնական իրավունքների նկատմամբ հարգանքին և զարգացնելով հարգանք երեխայի և այլոց մշակութային ու ազգային արժեքների նկատմամբ:

30. Փոքրամասնությունների և տեղաբնիկ ժողովուրդների երեխաները
Փոքրամասնությունների և տեղաբնիկ ժողովուրդների երեխաները իրավունք ունեն օգտվել սեփական մշակույթից, դավանել իրենց սեփական կրոնը և օգտագործել իրենց մայրենի լեզուն:

31. Հանգիստը, ժամանցը և մշակութային կյանքը
Երեխաներն ունեն ժամանցի, խաղի և մշակութային ու ստեղծագործական կյանքի մասնակցելու իրավունք:

32. Երեխաների աշխատանքը
Պետությունը պարտավոր է երեխաներին պաշտպանել այնպիսի աշխատանքի կատարումից, որը վտանգավոր է նրանց առողջության, կրթության ու զարգացման համար, սահմանել աշխատանքի ընդունվելու նվազագույն տարիք և կարգավորել աշխատանքի պայմանները:

33. Թմրամիջոցների գործածումը
Երեխան իրավունք ունի պաշտպանվել թմրամիջոցների գործածումից և հոգեմետ դեղամիջոցներից և դրանց արտադրության ու բաշխման մասնակիցը դառնալուց:

34. Սեռական շահագործումը
Երեխան իրավունք ունի պաշտպանված լինել սեռական շահագործումից և սեռական չարաշահումից, մարմնավաճառությունն ու պոռնոգրաֆիայի մեջ ներգրավումը ներառյալ:

35. Վաճառքը, առևտուրը և առևանգումը

Պետությունը պարտավոր է ամեն ջանք գործադրել երեխաների վաճառքը, առևտուրը և առևանգումը կանխելու համար:

36. Շահագործման այլ ձևեր

Երեխան ունի պաշտպանության իրավունք շահագործման վերաբերյալ 32-35-րդ հոդվածներում չնշված այլ ձևերից:

37. Կտտանքներն ու ազատազրկումը

Կտտանքները, դաժան վերաբերմունքը կամ պատիժը, մահապատիժը և ցմահ բանտարկությունը արգելվում են: Ձերբակալումը, ազատությունից զրկելու ցանկացած այլ ձև կարող է կիրառվել միայն՝ որպես ծայրահեղ միջոց՝ հնարավոր ամենակարճ ժամկետով: Երեխաներն ունեն իրենց նկատմամբ պատշաճ վարվեցողության, ազատազրկման դեպքում մեծերից առանձին կացության, իրենց ընտանիքների հետ կապ պահպանելու, իրավաբանական և այլ տեսակի օժանդակությունից օգտվելու իրավունք:

38. Զինված ընդհարումներ

Պետությունը պարտավոր է հարգել և ապահովել հարգանքը երեխաների վերաբերյալ մարդասիրական իրավունքի դրույթների նկատմամբ: Տասնհինգ տարին չլրացած երեխաները չպետք է ուղղակի մասնակցություն ունենան զինված ընդհարումների կամ բանակ զորակոչվեն: Զինված ընդհարումից տուժած բոլոր երեխաները պետք է օգտվեն պաշտպանությունից և խնամքից:

39. Վերականգնողական օժանդակություն

Պետությունը պարտավոր է ապահովել, որ զինված ընդհարումից, կտտանքներից, անտեսումից, շահագործումից կամ չարաշահումից տուժած երեխաները ստանան պատշաճ վերաբերմունք՝ վերականգնման և հասարակության հետ վերամիավորման համար:

40. Արդարադատության իրականացումը անչափահասների նկատմամբ

Հանցագործության համար մեղադրվող կամ հանցանք կատարած երեխաներն ունեն մարդու՝ իրենց իրավունքների հանդեպ հարգանքի իրավունք և, հատկապես, իրավաբանական ընթացակարգերի բոլոր փուլերին մասնակցության, այդ թվում իրենց պաշտպանության նախապատրաստման ու իրականացման իրավաբանական և այլ տեսակի օգնության իրավունք: Հնարավորինս պետք է

խուսափել դատավարությունից և հաստատություններում երեխաներին տեղավորելուց:

41. Հարգանք գոյություն ունեցող չափորոշիչների նկատմամբ

Եթե ազգային օրենքով կամ միջազգային այլ համապատասխան փաստաթղթերով սահմանված չափորոշիչներն ավելի բարձր են, քան սույն կոնվենցիայինը, ապա կիրառվում է ավելի բարձր չափորոշիչը:

42-54. Կոնվենցիայի հրապարակումը և կիրառումը

Պետությունը պարտավոր է մեծերի ու երեխաների շրջանում լայնորեն հրապարակել կոնվենցիայում ամրագրված իրավունքները:

Պետություններն ընտրում են 10 փորձագետից կազմված Երեխայի իրավունքների հանձնաժողով, որը քննության է առնում կոնվենցիայի անդամ պետությունների հաշվետվությունները՝ տվյալ երկրի կողմից կոնվենցիայի վավերացումից երկու տարի անցնելուց հետո և այնուհետև հինգ տարին մեկ:

Այս հաշվետվությունները ենթակա են լայն հրապարակման:

Հանձնաժողովը կարող է երեխաների իրավունքներին առնչվող առանձին հարցերի վերաբերյալ հատուկ ուսումնասիրություններ առաջարկել և իր գնահատման մասին հայտնել տվյալ պետությանը և Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային:

Հանձնաժողովը կոնվենցիայի իրականացմանը և միջազգային համագործակցությանը նպաստելու համար խրախուսում է առաջարկությունների ներկայացում և թույլատրում է մասնակցել իր նիստերին այնպիսի մարմինների, ինչպիսիք են Աշխատանքի միջազգային կազմակերպությունը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, Միավորված ազգերի կազմակերպության կրթական, գիտական և մշակութային կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ) և Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ):

Այդ կազմակերպությունները կարող են համապատասխան ինֆորմացիա ներկայացնել հանձնաժողովին: Վերջինիս խնդրանքով, Կոնվենցիայի

լավագույն իրականացման վերաբերյալ դրանք կարող են հանձնաժողովին խորհուրդներ տալ այլ հեղինակավոր մարմինների հետ միասին, որոնց թվում են Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմիններ և Միավորված ազգերի կազմակերպությունում խորհրդակցական կարգավիճակ ունեցող հասարակական կազմակերպություններ:

ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՏԵՔՍՏԸ՝

ՄԱԿ ԵԻԿ-ը անգլերեն լեզվով՝ *http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/CRC.aspx*

ՄԱԿ ԵԻԿ-ը 38 լեզուներով՝ *https://www.unicef.org/magic/briefing/uncorc.html*

Ֆակուլտատիվ արձանագրություն մանկական մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի վերաբերյալ՝ *http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/OPSCCRC.aspx*

Ֆակուլտատիվ արձանագրություն զինված ընդհարումներում երեխաների մասնակցության վերաբերյալ՝ *http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/OPACCRC.aspx*

Պալերմոյի արձանագրությունը ընդդեմ երեխաների առևտրի՝ *http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/ProtocolTraffickingInPersons.aspx*

Հավելված 2.

Կայուն զարգացման նպատակները

2016 թվականի հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ մտան «Կայուն զարգացման 2030 օրակարգում» ներառված կայուն զարգացման 17 նպատակներն՝ ընդունված աշխարհի երկրների առաջնորդների կողմից 2015 թվականի սեպտեմբերին կայացած ՄԱԿ-ի պատմական գագաթնաժողովի ժամանակ: Առաջիկա 15 տարիների ընթացքում առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչ ոք չանտեսվի:

Կայուն զարգացման նպատակները հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) արձանագրած հաջողությունների վրա և նպատակաուղղված են վերացնելու աղքատությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Նոր նպատակները բացառիկ են այնքանով, որ բոլոր երկրներին, այդ թվում հարուստ, աղքատ և միջին եկամուտ ունեցող երկրներ, կոչ են անում անցնել գործողությունների՝ խթանելու բարգավաճումը և միաժամանակ պաշտպանելու մոլորակը: Այստեղ հաշվի է առնված, որ աղքատության վերացումը պետք է ուղեկցվի այնպիսի ռազմավարությունների կիրառմամբ, որոնք կնպաստեն տնտեսական աճի խթանմանը և մի շարք սոցիալական կարիքների բավարարմանը, այդ թվում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության և աշխատանքի հնարավորությունների

ոլորտներում՝ միաժամանակ լուծելով կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները:

Թեև կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ և մշակել ազգային ծրագրեր այդ 17 նպատակներին հասնելու համար: Երկրներն առաջնային պատասխանատվություն ունեն իրականացնելու հետևողական գործողություններ և դիտարկելու նպատակների իրագործման առաջընթացը, ինչը պահանջում է որակյալ ու մատչելի տվյալների ժամանակին հավաքագրում: Տարածաշրջանային հետագա գործողություններն ու դիտարկումները հիմնված կլինեն ազգային մակարդակի վերլուծությունների վրա և կնպաստեն հետագա գործողությունների ու դիտարկումների իրականացմանը գլոբալ մակարդակում:

Գլոբալ մակարդակով 169 թիրախներից բաղկացած 17 նպատակները կենթարկվեն մշտադիտարկման՝ համաձայն մի շարք գլոբալ ցուցանիշների:
Ավելին՝ http://un.am/hy/p/sustainabledevelopmentgoals

Հավելված 3.

Լրագրողների միջազգային ֆեդերացիա

Երեխաներին առնչվող հարցերի վերաբերյալ հաղորդումների ուղենիշներ և սկզբունքներ

Բոլոր լրագրողներն ու լրատվության պրոֆեսիոնալները պարտավոր են հետևել էթիկայի և իրենց մասնագիտության ամենաբարձր չափորոշիչներին և լրատվության ոլորտում պետք է խթանեն Միավորված ազգերի կազմակերպության Երեխայի իրավունքների կոնվենցիայի (ՄԱԿ ԵԻԿ) մասին ինֆորմացիայի հնարավոր ամենալայն տարածումն ու Կոնվենցիայից բխող պահանջների բավարարումը, եթե ցանկանում են անկախ լրագրություն իրականացնել:

Լրատվական կազմակերպությունները հետաքննության և հանրային քննարկումների կարևոր հարցեր պետք է համարեն երեխաների իրավունքների խախտումները, նրանց ապահովությունը, անձնական կյանքը, անվտանգությունը, կրթությունը, առողջությունն ու սոցիալական բարեկեցությունը, ինչպես նաև նրանց շահագործման բոլոր ձևերը: Երեխաներն ունեն անձնական կյանք ունենալու բացարձակ իրավունք (միայն եզակի բացառություններով), որոնք հստակորեն շարադրված են այս ուղենիշներում:

Երեխաների կյանքին ու բարեկեցությանն առնչվող լրատվական գործունեությունը պետք է միշտ իրականացվի անպաշտպան երեխաների վիճակի ըմբռնմամբ:

Երեխաների մասին իրենց հաղորդումներում լրագրողներն ու լրատվական կազմակերպությունները պետք է ձգտեն հետևել վարքի կանոնների բարձր պահանջներին:

Մասնավորապես, նրանք պարտավոր են՝

- **ձգտել** հասնելու ճշգրտության և նրբանկատության գերազանցության չափորոշիչների, երբ հաղորդում են երեխաներին առնչվող հարցերի մասին.

- **խուսափել** այնպիսի ծրագրերի մշակումից և նկարների հրապարակումից, որոնք հայտնվելով լրատվամիջոցներում՝ վնասում են երեխաներն.
- **խուսափել** կարծրատիպերի օգտագործումից.
- **նկատի առնել**, ինչպես հարկն է, երեխաների վերաբերյալ ցանկացած նյութի հրապարակման հետևանքները և նվազեցնել երեխաներին հասցվող վնասը.
- **ձեռնպահ մնալ** երեխաներին տեսողական կամ այլ կերպ ճանաչման մատնելուց՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դա ակնհայտորեն ծառայում է հասարակության շահերին.
- **տալ** երեխաներին, երբ հնարավոր է, իրենց սեփական կարծիքը լրատվամիջոցներով հայտնելու հնարավորություն՝ առանց որևէ տեսակի պարտադրանքի.
- **ապահովել** երեխաների տրամադրած տեղեկությունների անկախ ճշտում և հատուկ հոգածությամբ ապահովել, որ ճշտումը կատարվի առանց տեղեկությունները տված երեխային վտանգի ենթարկելու.
- **խուսափել** երեխաների՝ սեռական բնույթի հրապուրիչ պատկերների օգտագործումից.
- **կիրառել** երեխաների նկարների ձեռքբերման արդար, բաց և շիտակ մեթոդներ, իսկ հնարավորության դեպքում դրանք ձեռք բերել երեխայի կամ երեխայի համար պատասխանատու մեծի, խնամակալի կամ խնամատարի գիտությամբ ու համաձայնությամբ.
- **ճշտել** ցանկացած կազմակերպության լիազորությունները, որոնք ներկայանում են երեխաների անունից և որպես նրանց շահերի պաշտպան.
- **չվճարել** երեխաներին կամ նրանց ծնողներին ու խնամակալներին այնպիսի նյութերի համար, որոնք առնչվում են երեխաների բարեկեցությանը, բացառությամբ այն դեպքերի, երբ ակնհայտ է, որ դա երեխայի օգտին է:

Լրագրողները պետք է քննադատաբար վերաբերվեն իրենց երկրներում ՄԱԿ ԵԻԿ-ի իրականացման կառավարությունների ներկայացրած հաշվետվություններին ու հայտարարություններին: Լրատվամիջոցները չպետք է երեխաների պայմաններին անդրադառնան ու լուսաբանեն որպես իրադարձություններ, այլ մշտապես լուսաբանեն այն գործընթացը, որը կարող է հանգեցնել կամ հանգեցնում է այդ իրադարձություններին:

Երեխաներին առնչվող հարցերի վերաբերյալ հաղորդումների այս ուղենիշները և սկզբունքները առաջին անգամ ներկայացվել են Ռեսիֆիում, Բրազիլիա, 1998 թվականի. մայիսին, որից հետո ընդունվել են ԼՄՖ-ի Սեուլում կայացած կոնգրեսի կողմից, 2001թվականին:

Ավելին՝
http://unicef.ge/uploads/IFJ_Guidelines_and_Principles_for_Reporting_on_Issues_Involving_Children.doc

Հավելված 4.

Եվրոպայի առողջապահական հաղորդակցության ցանց

Ուղենիշներ առողջապահության ոլորտը լուսաբանող թղթակիցների համար

Նախագծվել են 1998-ին PressWise-ի (MediaWise) կողմից և երկու տարի շարունակ մշակվել առողջապահության ոլորտի թղթակիցների և ԼՄՖ-ի հետ խորհրդակցությամբ: Վերջնական տարբերակը՝ որպես դրական գործելակերպի ուղենիշ, 2000 թվականին ընդունել է Առողջապահության համաշխարհային կազմակերպության Եվրոպայի առողջապահական հաղորդակցության ցանցը:

- Նախևառաջ, փորձեք չվնասել: Մարդու իրավունքները և հասարակական շահը վեր են ամեն ինչից:
- Ճշտեք ամեն ինչ: Ստուգեք ձեր ունեցած փաստերն ու աղբյուրները, նույնիսկ այն դեպքում, երբ ձեր ժամկետները սպառվում են:
- Սին հույսեր մի ներշնչեք: Առանձնապես զգույշ եղեք, երբ հաղորդում եք «հրաշք բուժամիջոցների» կամ հնարավոր «առողջական վտանգների» մասին:
- Զգույշ մնացեք ինչ-ինչ շահերից: Ինքներդ ձեզ հարցրեք, թե «ով է ամենից ավելի շահում այս հաղորդումից»:
- Հրաժարվեք անձնական դրդապատճառներից: Միշտ պարզեք դրդապատճառները, երբ նյութը հրապարակվում է հովանավորության շնորհիվ:
- Երբեք մի բացահայտեք ինֆորմացիայի այն աղբյուրը, որը գաղտնի է տրվել:
- Ցանկացած պարագայում հարգանք ցուցաբերեք հիվանդություն և հաշմանդամություն ունեցող անձանց անձնական և ընտանեկան կյանքի հանդեպ:
- Նկատի ունեցեք ձեր հաղորդման հետևանքները: Հիշեք, որ հիվանդություն կամ հաշմանդամություն ունեցող անձանց ու հատկապես երեխաներին դեռ երկար կյանք է սպասվում այն բանից հետո, երբ լրատվամիջոցները նրանց նկատմամբ կկորցնեն հետաքրքրությունը:

- Երբեք մի միջամտեք անձնական վշտին: Հարգեք կորուստ կրած մարդկանց զգացմունքները, հատկապես աղետների հետևանքով: Հարկավոր է հնարավորինս խուսափել զոհերի կամ նրանց ընտանիքների խոշոր պլանով նկարած լուսանկարներից ու հեռուստատեսային պատկերներից:
- Եթե որևէ բանի վերաբերյալ կասկած ունեք, լավ է հրաժարվել նյութի այդ մասը հրապարակելուց:

Առողջապահության համաշխարհային կազմակերպության ուղեցույցը առողջապահության ոլորտի լուսաբանման և հաղորդակցման համար՝
http://www.who.int/mediacentre/communication-framework.pdf

Հավելված 5.

Թեմատիկ օրացույց

Միշտ օգտակար է պատրաստի առաջադրվող թեմաներ ունենալ և դրանց շուրջ հաղորդումներ ու գաղափարներ մշակել: Միջազգային իրադարձությունների հետևյալ ցանկը լրագրողներին որոշ մտքեր կարող է հուշել: Դրանցից բացի կան ազգային, մշակութային և կրոնական բազմաթիվ այլ տարեդարձներ ու միջոցառումներ, որոնց օգտագործմամբ կարելի է երեխաներին միտված հաղորդումներ կառուցել:

Մարտ

1 Խտրականության անհանդուրժողականության օր
8 Կանանց միջազգային օր
21 Դաունի համախտանիշով մարդկանց համաշխարհային օր
22 Ջրի համաշխարհային օր

Ապրիլ

2 Աուտիզմի մասին իրազեկության համաշխարհային օր
7 Առողջապահության համաշխարհային օր
24-30 Պատվաստումների համաշխարհային շաբաթ

Մայիս

3 Մամուլի ազատության համաշխարհային օր

15 Ընտանիքների միջազգային օր

Հունիս

1 Երեխաների օր

1 Ծնողների համաշխարհային օր

12 Երեխաների ծանր աշխատանքի դեմ պայքարի համաշխարհային օր

Օգոստոս

1-7 Կրծքով կերակրման համաշխարհային շաբաթ

12 Երիտասարդության միջազգային օր

Հոկտեմբեր

5 Ուսուցչի համաշխարհային օր

11 Աղջիկ երեխայի միջազգային օր

13 Աղետների նվազեցման միջազգային օր

16 Պարենի համաշխարհային օր

24 ՄԱԿ-ի օր

Նոյեմբեր

20 Երեխաների համաշխարհային օր

25 Կանանց և աղջիկների նկատմամբ բռնության վերացման միջազգային օր

Դեկտեմբեր

1 ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր

3 Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր

10 Մարդու իրավունքների օր

18 Գաղթականների միջազգային օր